

Արեւմտահայագիտական Ուսմանց Կեդրոն

Յիշողութեան Վաւերագրումի Ծրագիր

Մարթա Ափանեան

(1936 - 2021)

Հողը թերեւ գայ վրան

Շնորհակալիք

Մեր խորհին շնորհակալությունը կը յայտնենք Պուրճ
Համուտի Ազգային Ծերանոցի եւ Կուրանոցի
պատասխանատուներուն եւ անձնակազմին այս
հարցազրոյցը կարելի դարձնելուն համար

Սոյն հարցազրոյցը կատարուած է Փետրուար 2020-ին
Պէյրուի

Հարցազրուցառու՝ Վարուժ Թէնպէլեան

Ծանօթագրող՝ Վաչէ Քրիստափոր

Թեմաներ

- Հարցազրուցատուին ընտանեկան պատմությունը
- Հօրը կրթության մասին
- Հօրը գաղթի պատմությունը
- Հօրը որդգրուելու պատմությունը
- Մինչև Պեյրութ հասնելու հօրը ողիսականը
- Հարցազրուցատուին մօրը Քարանթինա հաստատուելու մասին
- Ընտանիքին բազմաթիւ անգամներ փոխադրությունը, ընդմեջ՝ Պեյրութի եւ Դամասկոսի
- Դամասկոսի մեջ հարցազրուցատուին ապրած թաղը
- Ընտանիքին Պեյրութի Ամանոս թաղի մեջ հաստատուելուն մասին
- Հայախօսությունը տունին մեջ
- Ընտանիքին ներկայ վիճակին մասին
- Հարցազրուցատուին հայրե անտառաճանաչ դրացիներուն օրուամ լուրերը կարդալուն մասին

Պիտի խնդրէի որ անունդ, մականունդ տաս, քանի՞ ծնունդ ես, քանի՞ տարեկան ես: (00:00:04)

Մարթա Ափանեան, 36-ի ծնունդ եմ:

Այո՛: Ո՞ւր, Լիբանան՞ն ծնած ես: (00:00:12)

Այո՛, լիբանանցի եմ, Լիբանան ծնած եմ:

Իսկ հայրդ, մայրդ ուրտեղէ՞ն են: (00:00:16)

Լիբանանցի են, Խառնըլէն¹ եկած են: Ջարդին Խառնըլէն եկած են:

Ո՞ւր է աս Խառնըլէն: (00:00:20)

Խառնըլէն՝ Մարաշի, Ատանայի գիւղերէն է: Գիւղ, գիւղ է անիկա:

Հը՛, հը՛, հը՛, այո՛, գիտեմ: Բայց ո՞ւր... (00:00:26)

Հա՛:

Ո՞ր, ինչի՞ն մօտ է: (00:00:28)

Մարաշի, Ատանայի իրենց պատմութիւնը անտեղէն դատ, դատավարութիւնը անտեղերը կ'ըլլայ եղեր իրենց: Անանկ որ Խառնըն ուղղակի գիւղ է, գիւղ է, գիւղացի են իրենք: Բայց հայրս գիւղական կեանք չէ ապրած:

Ինչո՞ւ: (00:00:43)

Եօթը-ութը տարեկանին որք մնացեր է, է՛հ, բան՝ որքանոց դրկած են իրեն, ուրեմն որքանոց ապրած է մինչեւ 15-16 տարեկան: *Եաանի*² աղուոր ուսեալ էր հայրս: *Հաւ*³ հայերէնով, *հաւ* թրքերէնով:

Ուրտեղէ՞ն, ո՞ւր առած է ուսումը: (00:01:00)

¹ Խառնըն զուտ հայկական փոքր գիւղ մըն էր Կիլիկիոյ մէջ: Կը գտնուի ծովու մակերեսէն շուրջ 400 մէթր բարձրութեան վրայ, բարեբեր ընդարձակ դաշտի մը առջեւ, փոքր բլուրներու կողերուն: Արաբերէնով կը կոչուէր Հարունիէ, իսկ ներկայիս կը կոչուի Տուզիչի:

² *Եաանի* արաբերէն լեզուին մէջ «կը նշանակէ» կամ «այսինքն» իմաստը ունի:

³ *Հաւ* թրքերէնով «թէ» շաղկապին կը համապատասխանէ:

Չեմ գիտեր: Արմաշ վանքը⁴, չեմ գիտեր այնտեղերեն, այնտեղերեն է *իշտէ*:

Արմաշը Պոլիս չէ՞ մը: (00:01:07)

Չեմ գիտեր ատ չափը, ատ չափը չեմ գիտեր կոր հիմա, մնաց...

Բայց կարելո՞րը ուսեալ էր: (00:01:12)

Այո՛, կարելո՞րը ուսեալ էր, աղուոր հայախօս էր, աղուոր հայերեն գիտէր:

Բայց խառնեցիները թրքախօ՞ս կ'ըլլան բունը: (00:01:19)

Այո՛, այո՛: Բուն ամենը թրքախօս են, հա՛:

Միայն պապադ... (00:01:23)

Հայրս հայախօս էր: Քանի որ դպրոց գացեր է հոնտեղը, որբանոց գացեր է: Եօթը- ութը տարեկանէն որբանոց դրեր են անտեղ: Վերջը, օր մը ութը-տասը տարի վերջ, եօթը-ութը տարի վերջը ուզեր է որ ետ Խառնը գայ, մէկ հատ ծնողքը տեսնայ: Եկեր է որ ո՛չ ծնողք կայ, ո՛չ բան կայ: Իրեն ըսեր են, որ ծնողքս ո՞ւր է: Ըսեր են, թէ ծնողքդ Հելէպ⁵ գացին, անտեղէն *իշտէ* ջարդը, պիտ տանին *եսանի*, ջարդի պիտ տանին: Հելէպ գացին:

Հը՛, հը՛, այո՛: (00:01:53)

Աս ալ 17, 17-18 տարեկան եղեր է, ելեր է օր մը, խելքը փշ[եր]՝ ըսեր է որ Հելէպ երթամ ծնողքս տեսնամ:

Ըհը: (00:02:02)

Ուրեմն Հելէպ գացեր է: Հելէպը գացած ատենը տեսարան մը տեսեր է, շատ խրտչեր է: Աղջիկ մը, ըրը գետինը փորեր են, մարմիննին կէսը...

Օ՛հ: (00:02:14)

⁴ Արմաշի վանքը կամ դպրեվանքը եղած է հոգեւոր բարձրագոյն ուսումնարան մը: Հիմնուած էր 1889-ին Արմաշ գիւղի (ներկայ Թուրքիոյ Իզմիր քաղաքին մօտ) Չարխափան Սրբ. Աստուածածին վանքին (հիմնուած 1416-ին) մէջ: Վանքը թալանուած է 1915-ին եւ ներկայիս կը մնայ լքուած վիճակի մէջ:

⁵ Պէտք է Հալէպ հասկնալ: Հալէպը մայրաքաղաք Դամասկոսէն ետք Սուրիոյ երկրորդ մեծագոյն քաղաքն է, որ կը գտնուի երկրի հիւսիս-արեւմուտքը: Նախքան 2011-ին ծայր առած Սուրիոյ քաղաքացիական պատերազմը հոն էր երկրի հայկական մեծագոյն գաղութը:

Մէջը դրեր են կէսը, կէսն ա[ւ] դուրսը: *Եսանի*, ըսել ուզեր են որ Հելէպ մտնողը ասանկ պիտ ըլլայ:

Ի՛ւֆ: (00:02:20)

Ատ, անանկ: Ուրեմն ատ ձեռով գացեր է Հելէպ, Քառասուն Մանուկ⁶ եկեղեցին: Ամէն Սեֆեր Պերլի[քի]⁷ ժողովուրդը Քառասուն Մանուկ կը տանին եղեր: Անտեղէն կառքերը կու գան, կառքերուն կը լեցնեն, կ'առնեն Տէր Զօր կը տանին եղեր⁸:

Ի՛ւֆ, Է՞: (00:02:35)

Հա՛, վերջը ինքը *իշտէ* գացեր է, որ տեսնէ: Գացեր է հոն, հոն ա[ւ] չի տեսեր է ծնողքը: Չի տեսեր է: Հոնտեղը մի քանի օր մնացեր է, որ ալ չեն ձգեր, ետ չի գար, ըսեր են որ այսօր կառքերը վերջացաւ ըսեր են, վաղը ըսեր են: Հայրս այդ պատճառով ազատեր է:

Հա՛...

Անգամ մըն ա[ւ] կառք չէ եկած: Հա՛, այդպէսով, ուրեմն ետ դարձած է, եկած է ո՞ւր, Խառնը, բան, անտեղերը: Վերջը, ասիկա բան՝ մտածեր է որ բան երթայ: Միշտ կը փափաքի եղեր, որ Գերմանիա երթայ, Գերմանիա երթայ, բայց չէ կրցած, չէ եղած բախտը: Ուրեմն օր մը որոշեր է, որ ըրը...

Օգնեմ, ի՞նչ: Եթէ ըսէ բան մը, օգնեմ: (00:03:29)

Չէ՛, չէ՛, չէ՛, կ'ըսեմ ես ըրը բան եղայ, ասանկ *եսանի* յուզուեցայ, ան է ըսածս: Հա՛, վերջը ուրեմն ասի կը ձգէ ետ կու գայ: Ետ կու գայ, ի՞նչ պիտ ընէ: Մէկու մը քովը որդեգրեց, բան եղեր է, որդեգրուեր է, հո՛ն: Երեք տարի մեծահարուստի մը տունը որք մնաց: Զինուորական *պետեղ*⁹ տուեր են, բան տուեր են, երեք տարի մնացեր է

⁶ Հալէպի Սրբոց Քառասնից Մանկանց Եկեղեցին պատմական եկեղեցի մըն է: Կը գտնուի Ժտէյտէ թաղամասին մէջ եւ կառուցուած է 1429-ին:

⁷ Սեֆեր Պերլիքը 1914-ին օսմանեան սուլթանին իր բոլոր հպատակներուն արձակած ընդհանուր զօրաշարժի եւ զօրակոչի հրահանգն է: Զօրակոչին ընդառաջած զինուորները կը դրկուէին հեռաւոր ճակատներ եւ յաճախ չէին վերադառնար: Շատ անգամ Սեֆեր Պերլիք արտայայտութիւնը կը գործածուի «հին կամ աքսորի օրեր» իմաստով:

⁸ Տեղահանուած հայերը, որոնք կը դիմանային ճամբու դժուարութիւններուն, անօթութեան, ծարաւին, յոգնութեան, տանջանքներուն ու կլիմային եւ կը հասնէին Հալէպ, կը տեղաւորուէին յատուկ գաղթակայաններու մէջ: Որոշ ժամանակ ետք երբ նորեր կը հասնէին եւ տեղ բանալու համար անոնց, հիները խումբ-խումբ կը քշուէին դէպի Տէր Զօրի անապատը, որ կը գտնուի Հալէպէն շուրջ 300 քմ. դէպի արեւելք:

⁹ *Պետեղ* արաբերէն լեզուով «փոխարէն» կը նշանակէ: Զինուորական *պետեղ*ը զինուորական ծառայութենէ զերծ մնալու համար վճարուած գումարն է, այսինքն՝ ծառայութեան փոխարէն վճարուած գումար: Այդ օրերուն *պետեղ*ի գումարը 30 օսմանեան ոսկի էր:

հոնտեղը ատ մեծահարուստին տունը: Անունը Վարդիվատ է պապայիս: Անոնք ըսեր են, որ Վարդիվատը ի՞նչ է, երկայն [է]: Վարդան ըսենք թող երթայ ըսեր են: Ինքն ա[լ]...

Հա՞յ են եղեր: (00:04:05)

Հը՞:

Հա՞յ են եղեր: (00:04:06)

Հա՛, առաջ չի գիտցեր է: Իրեն ասանկ մօրուքաւոր՝ ծեր, կարծեր է որ թուրք է: Բայց հայ են եղեր:

Հը՛: (00:04:12)

Ներկարար են եղեր: Դերձաններ, տուներ կը ներկեն եղեր, չեմ գիտեր, այդպէս բաներ: Վերջը, տարիներ վերջը ասիկա ատ մեծահարուստին տունը կեցեր է, օր մը երեք տարի վերջ ատ տունէն բան ըրեր է, ձգեր է, գացեր է: Գացեր է ո՞ւր, Սոֆիա, Սոֆիա...

Պուկարիա: (00:04:32)

Պուկարիայի կողմը, հա՛, հոն գացեր է: Վերջը, անտեղ լսեր է որ ատ ապրած տունը, ընտանիքը, անոր պէս լեցուն ընտանիքների *թունելի*¹⁰ մը մէջ լեցուցեր են, այրեր են: Հասկցա՞ր:

Ը՛մ, այո՛: (00:04:46)

Այո՛, այրեր են հոնտեղը, ինքը, է՛հ, լաւ որ ատ տունէն գացեր է: *Եաանի* անանկով ազատեր է: Վերջէն փափաքեր է որ բան ըլլայ, ըրը Պուկարիա մնացեր է քանի տարի: Հոն *եազմա*¹¹ կ'աշխատի եղեր, ներկարարի-մերկարարի բաներ: Բաւական կենալէն վերջը, Պուկարիա ատ համայնավարութեան նոր ժամանակին, որ 25-ին, 26-ին, որ համայնավարութիւն կ'ըլլար կոր¹², այն ատենը հայրս բանէն՝ *սեֆերէ*¹³ թուղթը հաներ է, որ Պէյրութ պիտի գայ: Պէյրութէն ազգականները լսեր են, որ մէկ հատ մենք եղբօր տղայ ունինք, բերել տանք, ըսեր են, հոս:

¹⁰ *Թունել* (tunnel) ֆրանսերէն լեզուով «փապուղի» կը նշանակէ:

¹¹ *Եազմա* թրքերէն լեզուով «գլխաշոր», «գլխակապ» կամ «լաչակ» կը նշանակէ:

¹² Պուկարիոյ մէջ համայնավար կուսակցութիւնը այս թուականներուն խիստ հալածանքի կ'ենթարկուէր վարչապետ Ալեքսանտր Յանքովի (1879-1959) կառավարութեան կողմէ:

¹³ *Սեֆեր* թրքերէն լեզուով «ճամբորդութիւն» կը նշանակէ, իսկ *սեֆերէ* (արաբերէն *սաֆարա*)՝ «ղեսպանատուն»:

Ըմ, ըմ: (00:05:26)

Ուրեմն, հայրս ալ *փաստիոր* շիներ է, հաներ է թուղթը, *վիզան* առեր է, ըսեր է որ *աման* երթալով պիտ երթամ, ըսեր է, մէկ շաբաթ եւս կենամ ըսեր է: Ատ միջոցին, նայէ՛ րախտը *իշտէ* չօգնէ նէ մարդուն ատ միջոցին մէկ հատ մեծաւոր մը մեռեր է: Ատ մեծաւորը մեռելի պիտ բերեն եկեղեցին, ուրեմն եկեղեցին բերեր են, տանիքը ռումբ լարեր են: Նայի՛ ր դուն:

Ի՛ւֆ: (00:05:56)

Ուրեմն, երբ որ մեռելը բերեր են, ռումբը լարեր են, ռումբը պայթեր է, ահագին մարդ մեռեր է հոնտեղը: Վայրկեանական, *մամնուու թաժաուղ*¹⁴ ըրեր են: Մէկը տունէն դուրս պիտ չելլէ, արգիլուած է ըսեր են: Ուրեմն սկսեր են ոստիկանները տուն-տուն-տուն պտտիլ: Ոստիկանները պտտել[...], պտտելու ժամանակ տեսեր են, որ հօրս *փաստիոր*, ըսեր են, որ դուն մինչեւ հիմա պէտք է երթայիր, ինչո՞ւ հոս ես ըսեր են: Ան ալ ըսեր է որ աս պատճառով ուզես ուրեմն, ըսեր են, ատ բաներուն մէկ մասնակիցն ա[լ] դուն ես ըսեր են, բռներ են, առեր են, բանտ տարեր են:

Ի՛ւֆ: (00:06:29)

Ուրեմն աս մարդը տասը ամիս աս բանտէն, ան բանտը, ան բանտէն, չարչարուեր է: Տասը ամիս վերջը, ասչափ կ'ըսէ թուղթերով, անպարտ ըսելով անունս ելաւ կ'ըսէ կոր, ասչափ, տասը ամիս: Եւ ի՞նչպէս կ'ընեն ե[ղեր]: Բանտարկեալներուն ոտքերը շղթաներ կը դնեն եղեր, մէկը բաղնիք պիտի երթայ նէ, ամէնը մէկ պիտ երթան, մէկը դուրս պիտ երթայ նէ, ամէնը մէկ պիտ երթայ, աս ձեւերով ուրեմն: Վերջը *իշտէ* ազատեր է: Ազատեր է, օր մը վերջին ատենները շոգեկառքին մէջ կու գայ կոր եղեր, շոգեկառքը, դեռ բանտարկեալ է, չէ ազատուած դեռ, ուրեմն շոգեկառքը տեղ մը, ո՞ւր պիտ կենայ կայարանը, թեթեւցեր է տեղ մը, ոստիկանին քովէն ինքզինքը շոգեկառքէն վար նետեր է: Վար նետեր է, փախեր է: Փախեր է, մարդ մը կայ եղեր, որ վերմակ կը շինէ, վերմակ: *Աման*, ըսեր է մարդուն, *պես*¹⁵ ինծի ըսեր է: Մարդը ըսեր է որ եկո՛ւր, եկո՛ւր ըսեր է, վերմակին մէջը փաթթեր է, սենեակին մէջը ձգեր է իրեն *իշտէ*: Ա՛, վերջը մէկ անգամ ասանկ կ'ըսէ կոր, աչքս բացի որ կ'ըսէ կոր, ոստիկանը կը պտտի կոր, կ'ըսէ: *Աման*, ըսեր է մարդուն, ոստիկանը կը պտտի կո[ր]: Գոցէ՛, լոէ՛, լոէ՛, ըսեր է: Գոցէ՛, մի՛, մի՛ տեսնուիր: Վերջը իրիկուն եղեր է *իշտէ*, ատ հարուստին տունը, մարդուն, ատ վերմակճին *փրեզանթ*¹⁶ ըրեր է, որ աս տղան

¹⁴ *Մամնուու* արաբերէն լեզուով «արգիլուած» կը նշանակէ, իսկ *թաժաուղ*՝ «շրջագայութիւն»: Արաբերէն այս արտայայտութիւնը կը գործածուի երբ տարբեր պատճառներով կամ ապահովական նկատարումներով կառավարութիւններ որոշում կ'առնեն շրջագայութիւնը արգիլել երկրի որոշ շրջաններու մէջ:

¹⁵ *Պես* արաբերէն լեզուով «միայն» կը նշանակէ: Կը գործածուի նաեւ «կը բաւէ» իմաստով:

¹⁶ *Փրեզանթ* (présenter) ֆրանսերէն լեզուով «ներկայացնել» կը նշանակէ:

հետերնիդ տարեք: Ատ պատճառով, ատ մարդուն տունը *իշտէ* մնացեր է, գացեր [է] երեք տարի: Անկէ վերջը ելեր է *իշտէ* Սոֆիա գացեր է, Պուլկարիա գացեր է, տարիներով Պուլկարիա մնացեր է: Պուլկարիայէն *իշտէ փասփորն* ալ, հայկական *փասփոր*: Նանսենեան *փաշափորթ*¹⁷ ունի հայրս: Բայց մենք չի տեսանք անի: Ի՛նչ եղեր է, ի՛նչ չեղեր է, չեմ գիտեր:

Ըմ: (00:08:10)

Ուղղակի կ'ըսէ Նանսենեան *փաշափորթ* կ'ըսէ, *սեֆերէն* կ'ըսէ գացինք, կ'ըսէ, աղուոր շէնք մը, խոշոր կ'ըսէ, եռագոյնով, եռագոյնով, մեծ դրօշակ կախուած շէնքին առջեւը կ'ըսէ, ուրեմն *փասփորը* հաներ են: Անոր վրայ վերջը քիչ մը եւս կեցեր է, ելեր է, *իշտէ* Պէյրութ, Պէյրութ եկեր է: 28 տարեկան եղեր է: 27-28 տարեկանին Պէյրութ եկեր է: Մամաս ալ պզտիկ, որք ան ալ: Մամաս ալ Խառնըյէն: Ան ա[լ] խառնըցի է, պապաս ա[լ] խառնըցի է: Բայց հայրս որքանոց ապրած է, անոր համար ուսեալ էր հայրս, մամաս՝ ոչ անանկ: Մամաս պզտիկ ատենէն ան ալ որք մնացեր է: Հայր չի գիտեր, քան չի գիտեր անոնք: *Իշտէ*, ասանկով չեմ գիտեր, աս չափը:

Լա՛ւ, Պէյրութ ո՞ր բնակեր են: (00:08:59)

Պէյրո՞ւթ: Իր, հօրաքոյր մը ունէր հոս՝ *գեմիշ*: Այն ատեն *գեմիշ* կար, չէ:

Ո՞ր *գեմիշ*: (00:09:08)

Ըըը Մասլախ¹⁸ *գեմիշ*¹⁹: Հա՛, Քարանթինա:

Քարանթինա: (00:09:13)

Մենք Քարանթինա ապրած ենք: Պզտիկ էինք ասանկ:

Է՛հ, հո[ն], հարց չէ, այո՛: (00:09:16)

¹⁷ Նանսենեան *փասփոր* (Նանսենեան անցագիր կամ անձնակիր) ժամանակաւոր վկայագիր մըն էր, որ տրուած էր Ազգերու Միութեան կողմէ քաղաքացիութիւն չունեցող կամ փախստական անձերու Առաջին Համաշխարհային Պատերազմէն ետք (1922): Անիկա կոչուած էր գաղափարը յղացող նորվեկիացի Ֆրիտօֆ Նանսենի անունով եւ իրատուք կու տար տիրոջ բնակելու շուրջ յիսուն երկիրներու մէջ: Անկէ օգտուած են Ցեղասպանութենէն փրկուած հազարաւոր հայեր:

¹⁸ *Մասլախ* արաբերէն լեզուով «սպանդանոց» կը նշանակէ: Այստեղ Պէյրութի սպանդանոցին գտնուած վայրին կ'ակնարկէ, որ Քարանթինային մօտ կը գտնուէր:

¹⁹ *Գեմիշ* տարբեր լեզուներով «բանակատեղ» կը նշանակէ: Կը գործածուի նաեւ «հիւղաւան» իմաստով: Քառասնօրեայ արգելափակումէն ետք, Լիբանան հասած գաղթականները կը տեղաւորուէին թիթեղաշէն հիւղակներու մէջ Քարանթինայի սպանդանոցին մօտ:

Հոն հորաքոյր ունի եղեր, հորաքոյրին տունը մնացեր է: Հօրաքոյրին աղջիկը կայ եւ այլն: Հոն մնացեր է, անկէ վերջը ամուսնացեր է *հշտէ*:

Խառնեցիներն ալ թաղամաս ունէի՞ն Քարանթինա: (00:09:28)

Հա՛, մաս-մաս, գրեթէ բան են, *էաանի* ամէն թաղը իր բանը ունի:

Այսին[քն] խառնեցիներն րն ա[լ] թաղ ունէին: (00:09:35)

Հա՛ *էա*, հա՛ *էա*, գրեթէ դրացիները մէկը միւսին, ամէնը խառնըցի²⁰ էին: Մէկ մասը կ'երթաս ֆնտրճախցի²¹ են, մէկ մասը կ'երթան տորթեւոյցի²² են, մէկ մասը կ'երթայ ուրիշ բան են: *Եաանի* ինչպէս Մարաշը²³ շիներ են ժամանակին...

Այո՛: (00:09:49)

Թաղ-թաղ ճիշդ անանկ: Ուրեմն անանկով մնացինք Պէյրութ: Պէյրութ մնացինք, մէկ-երկու տարի վերջը մենք ելանք Դամասկոս գացինք:

Է՛հ, լա՛ւ, հիմա դուն ո՞ր ծնած ես: (00:10:00)

Ես հոս ծնած եմ:

Քարանթինա՞²⁴: (00:10:01)

Հա՛:

Մինչեւ քանի՞ տարեկան Քարանթինա էիր: (00:10:04)

Ես չորս տարեկանիս Դամասկոս գացած եմ:

²⁰ Խառնեցի ծագումով Խառնը կամ Խառնի գիւղի բնակիչն է: Տեսնել ծանոթագրութիւն թիւ 1:

²¹ Հոս պէտք է ֆնտրճաքցի հասկնալ: Ֆնտրճաքը Մարաշ նահանգի գիւղերէն է: Կը գտնուի Մարաշ քաղաքի հարաւը:

²² Տորթեւոյցին ծագումով Տէօրթ Եոլ շրջանէն անձն է: Տէօրթ Եոլը (հայերէնով Չորք Մարգպան) կը գտնուի Ատանայի նահանգին մէջ, Ալեքսանդրէթի հիւսիսը, Միջերկրականի վրայ:

²³ Մարաշը Կիլիկիոյ կարեւորագոյն եւ հարուստ քաղաքներէն մէկն էր: Կը գտնուի Լեոնային Կիլիկիոյ մէջ, Տարսուսէն լեռներու լանջերուն: Այստեղ նշուածը սակայն, Լիբանանի հայաբնակ Պուրճ Համուտ շրջանի Նոր Մարաշ թաղամասն է, որ հիմնուած է 1920-ական թուականներու սկիզբը Յեղասպանութենէն փրկուած կիլիկեցի հայ գաղթականներու ժամանումով:

²⁴ Քարանթինա արաբերէն արտայայտութիւնն է *քուտընթին* (quarantine) բառին, որ քառասնօրեայ արգելափակման վայր կը նշանակէ: Լիբանան հասած գաղթականները 40 օր պարտաւոր էին մնալ վայրի մը մէջ, որ հետագային Քարանթինա պիտի կոչուէր: Պէյրութի Քարանթինա շրջանը քաղաքի նաւահանգիստին մօտ կը գտնուի:

Հա՛, ուրեմն Քարանթինա շատ չես յիշեր: (00:10:11)

Գիտեմ, ամենը գիտեմ նորեն: Ետ եկայ: Դամասկոս գացինք, երկու տարի մնացինք: Հոնտեղ [պապայիս] գործով գացինք, վերջը ետ եկանք:

Ի՞նչ գործ կ'ըներ պապադ: (00:10:20)

Ծերերու *եազման* կը կար[էին], *եազմա* կը կապէի՞ն, *եա...*

Եազման ի՞նչ էր: (00:10:25)

Ըրը շէշ²⁵ է, վրան կաղապարներուն...

Հա՛: (00:10:20)

Հա՛, ան է: Հա՛, *եազմա*: Անկէ կ'աշխատէր: Հա՛, վերջը...

Հա՛, ետ եկաք, ետ Քարանթինա եկաք: (00:10:33)

Ետ եկանք, ետ եկանք, հա՛, հոնտեղը: Ուրեմն ետ եկանք, անկէ վերջը եղբայրս ծնաւ, ողորմած: Հիմա ողորմած եղաւ, եղբայրս ծնաւ: Երկու տարե[կան], երեք տարեկան մը, չորս տար[եկան], ես ութը տարեկան էի, ետ ելանք Դամասկոս գացինք:

Է՛հ, հոս դպրոց գացի՞ր Քարանթինա: (00:10:49)

Հա՛, մինչեւ վկայական: Քարանթինայի դպրոցը²⁶, եկեղեցին կար:

Ի՞նչ էր եկեղեցիին անունը: (00:10:55)

Անունը չեմ յիշեր կոր²⁷: Հոն Քարանթինայի եկեղեցին կար:

Եղա՛ւ, եղա՛ւ: (00:10:58)

Հա՛, հա՛, հա՛, հոն: Մինչեւ ծաղիկ դասարան հոս գացի, վկայական առի հոստեղէն, վերջը ելանք Պէյրութ[էն] Դամասկոս գացինք:

²⁵ Շէշ արաբերէն ծագումով բառ մը, որ «քող» կամ «շղարշ» կը նշանակէ: Արաբերէնի մէջ կը գործածուի նաեւ այն կտորին իմաստով, որ որպէս վիրակապ կ'օգտագործուի:

²⁶ Քարանթինայի դպրոցը կը կոչուէր Ազգ. Մեսրոպեան Վարժարան:

²⁷ Քարանթինայի թիթեղաշէն եկեղեցին կը կոչուէր Սուրբ Երրորդութիւն: Նախապէս հիւղաւանը ունեցած է փայտեայ եկեղեցի մը՝ Սուրբ Խաչ:

Դամասկոս գացիք նորէն: (00:11:07)

Դամասկոս գացի, արդէն աղքատութեան երեսէն, շատ աղքատ էինք, *եսանի* պապաս ալ շատ երկու տարի ալ հոն գացի, մինչեւ տասը տարեկանիս, անկէ վերջն ալ ղ դպրոցէն ելայ...

Հոն ո՞ր դպրոց գացիր, Դամասկոս: (00:11:18)

Թարգմանչաց: Մէկ դպրոց կար այն ատենը: Եկեղեցին, Թարգմանչաց դպրոցը²⁸, Սուրբ Սարգիս եկեղեցին²⁹ է անիկա: Հոն գացի, անկէ վերջն ալ եկանք: Մնացի՛նք, մնացինք 20-22 տարի, մէկ կտոր:

Քարան[...], հոն, Դամասկոս: (00:11:32)

Այո՛, Դամասկոս:

Օ՛հ: (00:11:34)

Հա՛: Անկէ վերջը 62-ին, 62-ին ելանք ետ եկանք: Հայրս...

Է՛հ, Դամասկոս ո՞ր կը բնակէիք: (00:11:40)

Ապպարա³⁰ կ'ըսեն, Ապպարա կ'ըսեն, Պապ Թումայի³¹ շրջանները քրիստոնեայ էին այն ատեն: Ամէն հայերը, արաբները հոն քրիստոնեայ [էին], մահմետականութիւն չի կար ան տեղերը: Հա՛, աս չափով *իշտէ*: Անկէ վերջը սկսանք աշխատիլ: Կամաց-կամաց, կամաց-կամաց հասանք: Յետոյ միւս քոյրերս ելան: Մենք չորս քոյր, երկու եղբայր էինք:

Ը՛մ: (00:12:04)

²⁸ Դամասկոսի Ազգ. Թարգմանչաց Ճեմարանը կը գտնուի Սրբ. Սարգիս եկեղեցւոյ կից: Հիմնուած է 1889-ին եւ կը գործէ մինչեւ օրս: Ունի երեք բաժին՝ մանկապարտէզ, նախակրթարան եւ միջնակարգ:

²⁹ Դամասկոսի Սուրբ Սարգիս եկեղեցին կը գտնուի քաղաքի արեւելեան կողմը՝ Պապ Շարքի (Արեւելեան Դուռ) պարիսպի կողքին: Կառուցուած է 15-րդ դարու սկիզբը, սակայն 1860-ին պատահած հրդեհի մը պատճառով հրոյ ճարակ դառնալէ ետք, քանդուած եւ վերաշինուած է 1866-ին:

³⁰ Ապպարան Դամասկոսի շրջաններէն Սրբ. Պօղոսին սրբավայրն է: 1920-ական թուականներուն անոր մօտակայ Սրբ. Սարգիս եկեղեցւոյ կալուածին մէջ գտնուող փոքր կառոյցները յատկացուած են հայ գաղթականներուն: Ժամանակին այդ կառոյցները կը ծառայէին որպէս Երուսաղէմ մեկնող հայ ուխտաւորներու կացարան:

³¹ Պապ Թումա (արաբերէնէ թարգմանաբար «Թովմասի Դուռ» կամ «Թովմասի Դարպաս» կը նշանակէ) Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսի ընդհանրապէս քրիստոնեայ բնակչութեամբ թաղամասերէն է: Քաղաքի պատմական պատերու եօթը դռներէն մէկն ալ կը կոչուի նոյն անունով:

Հա՛: Մէկ հատը մեռաւ: Քոյրս ա[լ] մէկ հատը մահացաւ, հիմա երեք քոյր, մէկ եղբայր ենք: Աս չեմ գիտեր, աս չափով...

Է՛հ, լա՛ւ, Պէյրութ եկաք, յետո՞յ: (00:12:15)

62-ին Պէյրութ եկանք:

Լա՛ւ, ի՞նչ ըրիք հոս՝ Պէյրութ: Նորէ՞ն Քարանթինա գացիք ետ: (00:12:21)

Չէ՛:

Ո՞ւր գա[ցիք], ո՞ւր... (00:12:22)

Հոս տեղը՝ Ամանոս³²: Ամանոս քեռիս կար, քեռիիս աներ պապային տունը կար, ըսաւ որ տուն մը ունէին, վարձու պիտ տային, ըսաւ որ քոյրիկս պիտի գայ Դամասկոսէն, մէկու մը մի՛ տաք ըսաւ, քոյրս պիտ գայ: Եկանք, Ամանոս նստանք, հոն: Հայերը ամէն, չէ՞ որ Քարանթինայի ժողովուրդին...

Այո՛, այո՛: (00:12:41)

Այն ատենը հող ծախեցին: 160 կանգուն: Ամէն մէկ տունին, կ'ելլեն ամանոսցիները տուն շինեցին, *վարախա*³³ *իշտէ*, անտեղը: Ամէնը ամանոսցի էին, մէկ հատ արաբ չի կար: Մէկ հատ արաբ չի կար:

Է՛հ, խառնեցիները ամանոսցի՞ կը սեպուէին: (00:12:58)

Հա՛, Ամանոս: Խառնըցի կար, ֆնտրճախցի կար, ամէնը, նորէն թաղ-թաղ: Բայց ամէնը ամանո...

Ամանոսցի էին: (00:13:05)

Ամանոսցի կ'ըսեն: Ամէնուն ամանոսցի կ'ըսեն իրենք:

Այո՛: (00:13:08)

Ասանկով:

³² Այստեղ նշուած Ամանոսը Պուրճ Համուտի թաղամասերէն մէկն է:

³³ *Վարախա* կամ *վարաքա* թրքերէն լեզուով թիթեղեայ կամ փայտէ «տնակ» կամ «հիւղակ» կը նշանակէ:

Ուրեմն չէի գիտեր: Խառնեցիներն ա[լ] ամանոսցի են: (00:13:12)

Հա՛, հա՛, ա՛ւ: Արդէն խառնեցիները ամանոսցի են: Քանի որ գիւղացի են անոնք: Ամանոսցի:

Չէ՛, այսինքն հասանալեցիներն ա[լ] ամանոսցի են, լաբաշցիներն ալ: (00:13:20)

Հա՛, Հասան Պէյ, հա՛, լաբաշցի, հասանալեցի, ամէնը...

Ամէնը քով-քովի՞ կ'ապրէիք հոս: (00:13:25)

Հա՛, հա՛, հա՛, ամէնը քով-քովի, եւ գրեթէ ազգական են իրարու, ազգական էին: Հա՛, ասանկով, չեմ գիտեր:

Է՛հ, ե՞րբ ամուսնացար դուն: (00:13:34)

Ես չամուսնացայ:

Չամուսնացա՞ր: (00:13:35)

Չէ՛:

Կը ներես: (00:13:36)

Քոյրերս, եղբայր[ս] ամուսնացան: Ես չեմ ամուսնացած:

Է՛հ, լա՛ւ, ի՞նչ ըրիր կեանքիդ մէջ: Ի՞նչ կ'ընէիր, ինչո՞վ կը զբաղէիր: (00:13:41)

Կ'աշխատէի: Մէկ օր...

Ի՞նչ կ'աշխատէիր: (00:13:43)

Ատեն մը գացի տաբատ սորվեցայ կարելու, տաբատ կարելու սորվեցայ: Վերջէն տունը մեքենայ առինք, պարտքով-մարտքով մեքենայ առինք, բաւական տունը աշխատեցայ: Վերջէն ձգեցինք Պէյրուժ եկանք նէ, Պէյրուժ եկանք նէ, ձգեցի ուրիշ

տեղ՝ հոս Թոմսընները³⁴ կ'ըսէին, հոնտեղ *փիլիսոփ*³⁵ գործ կ'ընէին, ելանք հոն գացինք: 30 տարի անոնց քով աշխատեցայ: Մէկ կտոր հոն մնացի, հոն աշխատեցայ: Անկէ վերջն ալ արդէն ելայ: Մայրս հիւանդացաւ, մամայիս նայեցայ: Մամաս մահացաւ, չեմ գիտեր ինչ եղաւ, *իշտէ*, պատմութիւն: Հա՛, կեանքս աս է:

Հա՛ւ, երկու եղբայրներդ եւ միւս քոյրերդ ի՞նչ ըրին: (00:14:22)

Քոյրս մէկը ամուսնացած է, հոս է: Միւս քոյրս ամուսնացաւ ետ Դամասկոս գնաց, ան ալ մահացաւ, չորս-հինգ տարի առաջ մահացաւ: Քոյրիկիս զաւակները կայ, երկու աղջիկ, Ամերիկա գացին անոնք ալ, Գանատա գացին, նոր, *եսանի* եօթը-ութը տարի առաջ: Հոս էին: Եղբայրս կար, ամուսնացաւ հոս: Ունի զաւակ, երկու տղայ, մէկ աղջիկ ունի հոս:

Անոնք հո՞ւ են: (00:14:50)

Հա՛, անոնք հոս են: Եղբայրս մահացաւ բայց: Մահացաւ, հա՛: Զաւակները ողջ են, տիկինը ողջ է: Անանկ:

Այսինքն ընտանիքին կէսը դուրսն է, կէսը հո՞ւ է: (00:15:01)

Հա՛, կէսս: Քոյրս մէկ հատն ալ Ամերիկա է: Ատ աղջիկներուն քովն է: Քրոջս աղջիկներուն քովն է անիկա ալ: Ես միայն հոս եւ քոյրս կայ, քոյրս կայ եւ եղբայրս մէկ հատը, ողջ մնացողը հոս ենք, հոս ենք: *Իշտէ*, ասանկով կեանքերնիս...

Է՛հ, լա՛ւ, ինչո՞ւ դուն հիմա հոս ես: (00:15:24)

Կ'ըսեմ կոր *իշտէ*, ոտքիս պատմութիւնը ունիմ:

Ատո՞ր համար եկար հոս: (00:15:28)

Հա՛, հա՛:

Տունը առանձին կ'ապրէիր առաջ: (00:15:30)

Վերջաւորութեան ամէնը ամուսնացան: Մենք ութը հոգի էինք:

³⁴ Շատ հաւանաբար հարցազրուցատուն այստեղ դերձակութեան ասպարեզի եւ հագուստներու արտադրութեան (մասնաւորաբար փէշերու) համաշխարհային ճանաչում ստացած «Թոմսըն» իւրայատուկ ոճին կ'ակնարկէ: Ամերիկեան «Թոմսըն» կարի գործարանը սկսած է գործել 19-րդ դարու կեսերէն: Հետագային նման գործարաններ հիմնուած են եւրոպական տարբեր քաղաքներու մէջ:

³⁵ *Փիլիսոփ* (philosophe) ֆրանսերէն լեզուով ծալքաւոր կը նշանակէ: Բառը կը գործածուի ընդհանրապէս հագուստներու (մասնաւորաբար փէշերու) կարուածքի ծալքաւոր ձեւը մատնանշելու:

Այո՛:

Չորս քոյր, երկու եղբայր: Ամենը ամուսնացուցինք, փառք տիրոջ, ամենը ամուսնացուցինք, ես մնացի մինակ: Մամաս ա[լ] մահացաւ, ան ա[լ] մահացաւ: Է՛հ, լաւ է: Մէկ անգամէն ոտքիս ցաւ մը եկաւ: Ոտքիս ցաւ մը եկաւ, բռնուեցաւ, չի կրցայ քալել: Բժիշկը բերինք, ըսաւ որ ասանկ, ասանկ, հա՛, հիւանդանոց կ'ուզէ, չեմ գիտեր ինչ, ասանկով ինկայ հոստեղը:

Է՛հ, ո՞վ կը նայի քեզի հոս: (00:15:57)

Իշտէ, իրենք կը նային:

Չէ՛, ծախսերդ եւ այլն ո՞վ կը հոգայ: (00:16:02)

Ծախսերը *իշտէ*, մի քանի *դուրուշ* կար, անիկա ընենք, քոյրս կու գայ ամէն օր հոս, մօտ է, Կիլիկիան թաղ³⁶ կը նստի քոյրս, հոստեղը: Ամէն օր անիկա կու գայ, կը նայի *իշտէ*:

Աստուած քեզի առողջութիւն տայ, երկար կեանք տայ, առողջութիւն տայ, շնորհակալ եմ: (00:16:20)

Եաանի կրցա՞յ բան մը հասկցնել:

Այո՛, այո՛, այո՛, այո՛: Հայերէնդ ա[լ] շատ լաւ է: (00:16:25)

Հա՛, հը՛, հը՛ (կը խնդայ), քանի որ մենք հայախօս էինք տունին մէջը: Խառնըցիները թրքախօս են...

Այո՛: (00:16:31)

Բայց հայրս չէ որ որբանոց կարդացեր էր, չէր ձգեր որ թրքերէն խօսինք: Կ'ըսէր որ տունին մէջը հայերէն խօսեցէ՛ք, թրքերէն մի՛ խօսիք: Աղուոր թրքերէն թերթ կը կարդար հայրս:

Բայց չէր խօսեր: (00:16:45)

Թրքերէն *պիւլպիւլի*³⁷ պէս գիտէ:

³⁶ Այստեղ նշուած Կիլիկիան Պուրճ Համուտի թաղամասերէն մէկն է:

³⁷ *Պիւլպիւլ* թրքերէն լեզուով «սոխակ» (պլպուլ) կը նշանակէ:

Չէ՛, ձեր հետը չէր խօսեր: (00:16:49)

Հա՛, չէ՛, մեր հետը չէր խօսեր: Միշտ կ'ուզեր հայերէն խօսիլ: Քարանթինա նստած ատեննիս, հայրս չէ որ լաւ կը կարդայ թերթը, հայերէն թերթը եւ այլն, բոլոր ծերերը կը հաւաքուէին, Պրն. Վարդա՛ն, մեզի այսօր ի՞նչ լուր կայ: Հայրս թերթը ձեռքը կ'առնէր, կը կարդար իրենց ամենուն:

Ի՞նչ թերթ, ի՞նչ թերթ կը կարդար: (00:17:09)

Ինչ կ'առնէ, այն օրուայ «Արեւելք»³⁸ է մը, «Ազդակ»³⁹ է մը, չեմ գիտեր ինչ: Այն ատենները՝ իշտէ չեմ գիտեր: Պզտիկ ատենս ի՞նչ թերթ կար այն ատենը: Հէջ չեմ գիտեր:

Չեմ գիտեր, դուն պիտ ըսես: Հը՛, հը՛, հը՛: Չես յիշեր: (00:17:20)

Չէ՛, այդ չափը չեմ յիշեր կոր *ամմա...*

Հարց չէ: (00:17:23)

«Արեւելք»ը հին է:

Այո՛: (00:17:24)

«Արեւելք» թերթը հին է:

Այո՛: (00:17:26)

Եթէ «Ազդակ»ն ալ կար նէ, այն ատենը, չեմ գիտեր կոր:

Այո՛, «Ազդակ»ն ա[լ] հին է: (00:17:31)

Է՛հ, ուրեմն անոնցմէ է: Չեմ գիտեր աս չափով կրցայ գոհացնել նէ:

Այո՛, այո՛, շնորհակալ եմ: Շատ շնորհակալ եմ: (00:17:41)

Կրցա՞յ քան մը գոհացնել:

³⁸ Խօսքը շատ հաւանաբար կը վերաբերի այդ օրերուն Հալէպի մէջ հրատարակուող «Արեւելք» օրաթերթին: Անիկա լոյս տեսած է 1946-էն 1963:

³⁹ «Ազդակ» ազգային, քաղաքական, հասարակական բովանդակութեամբ լիբանանահայ օրաթերթը լոյս կը տեսնէ 1927-էն ի վեր: Անիկա Լիբանանի մէջ Հ.Յ.Դ. կուսակցութեան պաշտօնաթերթն է 1965-էն ի վեր:

Այն՝ այն՝ այն՝ (00:17:43)